ՎՐԱՍՏԱՆ

«ՅՐԱՆՏԱՆՈ» (ՆԱՀԱՐԱՊԱՏԱԿ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 73 - 74 (16978) ՇԱԲԱԹ 18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԱԽԱԼՔԱԼԱՔԻԻ ԵՎ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ

ՄԵԼՔՈՆ ՄԱԿԱՐՅԱՆ. «ՀԱՄՈԶՎԱԾ ԵՄ՝ ՀԱՄԱՏԵՂ ՁԱՆՔԵՐՈՎ ԿՈՒՆԵՆԱՆՔ ԱՎԵԼԻ ՁԱՐԳԱՑԱԾ ՔԱՂԱՔ ՈՒ ԳՅՈՒՂ»

Ընթացիկ տարվա հոկտեմբերի 2-ին Վրաստանում անցկացվելիք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կապակցությամբ, «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցությունը շարունակում է մունիցիպալիտետներում քաղաքապետերի եւ մունիցիպալիտետների սակրեբուլոների անդամության իր կողմից առաջադրած թեկնածուների ներկայացման շնորհանդեսը:

Սեպտեմբերի 12-ին նման միջոցառում անցկացվեց Ախալքալաքիում: «Վրացական երազանքի» քաղաքապետի թեկնածու Մելքոն Մակարյանին եւ սակրեբուլոյի անդամության թեկնածուներին ներկայացնելու համար տարածաշրջանում էին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, խորհրդարանի նախագահ Կախա Կուճավան, պաշտոնական այլ անձինք:

Ներկայացնելով քաղաքապետի թեկնածուին՝ Իրակլի Ղարիբաշվիլին հակիրճ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆ. «ՄԵՆՔ ՈՒՆԵՆՔ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԿՈՆԿՐԵՏ ՏԵՍԼԱԿԱՆ»

Սեպտեմբերի 12-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու, Վրաստանի խորհրդարանի նախագահ Կախա Կուճավայի մասնակցությամբ, Նինոծմինդայում տեղի ունեցավ հոկտեմբերի 2-ին անցկացվելիք տեղական ինքնակառավարման ընտրություններում «Վրացական երազանքի» կողմից առաջադրված Նինոծմինդայի քաղաքապետի եւ մունիցիպալիտետի սակրեբուլոյի անդամության թեկնածուների ներկայացման շնորհանդեսը:

- Մենք միասին անցել ենք երկար ու բարդ ճանապարհ, հասել ենք նշանակալի հաջողությունների: Մեր ակտիվում վերջին յոթ ընտրություններում հաղթանակ ենք նշել, եւ այսօր պատրաստվում ենք հոկտեմբերի 2-ին նշել ութերորդ հաղթանակը, երբ «Երազանքի» թեկնածու Անի Մոսոյանը անվերապահ կհաղթի: Դուք ունեք արտակարգ քաղաքապետ եւ տիկին Անիվարդը ոչ միայն Նինոծմինդայի եւ ողջ տարածաշրջանի համար գործիմաց քաղաքապետ է, այլեւ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԿՐԹԱԿԱՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՄԵԿՆԱԿԵԾ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Սեպտեմբերի 15-ին Վրաստանում սկսվեց նոր ուսումնական տարին: Երկրի բոլոր դպրոցներում, բուհերում եւ մասնագիտական ուսումնարաններում ուսումնական գործընթացը մինչեւ հոկտեմբերի 4-ը կընթանա հեռավար մեթոդով:

Վրաստանի վարչապետի ղեկավարած միջգերատեսչական խորհրդի որոշմամբ, կորոնավիրուսի տարածումը կանխարգելելու նպատակով, խոշոր քաղաքներում ու որոշ գյուղերում ուսումնական գործընթացը բոլոր դասարանների աշակերտների համար մեկնարկեց հեռավար կարգով: Ըստ կառավարության որոշման, հոկտեմբերի 4-ից ուսումը առկա կշարունակվի այն գյուղերի եւ քաղաքների դպրոցներում եւ այլ ուսումնական հաստատություններում, որտեղ վարակի տարածման ցուցանիշը 4 տոկոսից ցածր կլինի: Վրաստանում առաջին դասարանցիների ուստարին կսկսվի հոկտեմբերի 4-ից, դասասենյակներում:

Նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ իր ողջույնի ուղերձում Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Միխեիլ Չխենկելին առանձնակի ընդգծեց, որ կորոնավիրուսի համավարակի պայմաններում ուսուցման հեռավար ձեւաչափը իրավիճակով թելադրված պարտադիր, սակայն ժամանակավոր երեւույթ է, եւ հույս հայտնեց, որ մոտ ապագայում կրթական բոլոր հաստատություններում ուսուցման գոծընթացը կիրականացվի նորմալ ընթացակարգով:

(Խորագրի շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-Ը ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՆՇԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 30-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Սեպտեմբերի 21-ին Հայաստանը կնշի Անկախության 30-րդ տարեդարձը:

Անկախության 30-րդ տարեդարձի կապակցությամբ, ինչպես նշեց վարչապետ Նիկոլ Փաշինյանը, հայտնի հանգամանքների բերումով, մարդկանց տրամադրությունը տոնական համարել չի կարելի, բայց կառավարությունը որոշել է պատշաճ ձեւով նշել Հայաստանի անկախության 30-ամյակը:

Մասնավորապես, Երեւանի Հանրապետության հրապարակում տեղի կունենա գեղեցիկ ու գունագեղ տոնակատարություն,

որն առաջին հերթին նվիրված կլինի Հայաստանի անկախության, անվտանգության, ինքնիշխանության եւ Արցախի համար կյանքը զոհած նահատակների հիշատակին:

«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐ՝ 100-ԱՄՅԱ ԹԵՐԹԻՆ

ՋՈՒՐԱԲ ՏՂԵՄԱԼԱՋԵ

Ցանկանում եմ շնորհավորել «Վրաստան» թերթի հիմնադրման 100-ամյակի առիթով: Իր 100-ամյա գործունեության տարիներին ու նաեւ այսօր էլ «Վրաստան» թերթը իր բազմահազար ընթերցողներին ներշնչում է սեր վրաց պետականության, վրաց ժողովրդի նկատմամբ ու նպաստում վրաց հասարակայնությանը նրա ինտեգրման գործընթացին:

Թերթը Վրաստանում ապրող հայազգի քաղաքացիների համար, ովքեր չեն տիրապետում վրաց լեզվին, միանշանակ ուղենիշ է, նրանց օգնում է մի կողմից պահպանել ազգային ինքնությունը, իսկ մյուս կողմից՝ ի պաշտպանություն Վրաստանի շահերի, իրականացնել իրենց քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ԾՆՈՒՆԴԴ, ՎԱՍՏԱԿԱՇԱՏ «ՎՐԱՍՏԱՆ»


ՎԱՉԱԳԱՆ ՌՈՍՏԱԿՅԱՆ

Վրաց ժողովրդի, նրա պետականության բախտ ու ճակատագրի տնօրինման հարցում իր անուրանալի ներդրումն ունի «Վրաստան» հայատառ թերթը, որը, «Կոմունիստ», «Զարյա Վոստոկա», «Սոփլիս ցխովրեբա» եւ այլ թերթերի հետ համագործակցված, առ այսօր շարունակում է մնալ իր բարձրության վրա: «Խորհրդային Վրաստան» (այժմ՝ «Վրաստան») թերթը լուսաբանել է վրաց պետականության, տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի նվաճումները, անաչառ եղել՝ տեղ գտած սխալների, վրիպումների ու բացթողումների հանդեպ:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

COVID - 19

ԷԿԱՏԵՐԻՆԵ ՏԻԿԱՐԱՋԵ. «ՀԱՄԱՀԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԿԱՅՈՒՆ Է, ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՏԵՄՊԵՐԸ ՏԱՐԱՇԱՐՋԱՆՆԵՐՈՒՄ ԴԵՌԵՎ ԲԱՎԱՐԱՐ ՉԵՆ»

Ինչպես հայտարարեց Վրաստանի առողջապահության նախարար Էկատերինե Տիկարաձեն, գերատեսչությունը համաճարակաբանական իրավիճակը գնահատում է կայուն:

Ինչպես նշեց նախարարը, դեռ վաղ է խոսել Վրաստանում հիմգերորդ ալիքի սկզբի մասին: Ներկայումս համաճարակաբանական վիճակը կայուն է, սակայն մահացության ցուցանիշը շարունակում է բարձր մնալ: Առողջապահության նախարարը դժգոհ է պատվաստման տեմպերից.

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԵՎ ՆԻՆՈՑՄԻՆԴԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ

ՄԵԼՔՈՆ ՄԱԿԱՐՅԱՆ. «ՀԱՄՈԶՎԱԾ ԵՄ՝ ՀԱՄԱՏԵՂ ՋԱՆՔԵՐՈՎ ԿՈՒՆԵՆԱՆՔ ԱՎԵԼԻ ՁԱՐԳԱՑԱԾ ՔԱՂԱՔ ՈՒ ԳՅՈՒՂ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

անդրադարձավ անցած չորս տարիների ընթացքում Ախալքալաքիի մունիցիպալիտետում կառավարող թիմի նախաձեռնությամբ իրականացված նախագծերին ու ընդհանրապես 2012 թվականից երկրում տեղ գտած փոփոխություններին:

- Մեր իշխանության գալուց ինը տարի է անցել, եւ այդ ժամանակահատվածում ողջ երկրում մեծ թվով նախագծեր են իրականացվել: Բացառություն չեն կազմել Սամցխե-Ջավախեթին, Ախալքալաքին: Դրանք առնչվել են ճանապարհներին ջրամատակարարման եւ գազիֆիկացման նախագծերի, դպրոցների ու մանկապարտեզների շինարարության-վերանորոգմանվերականգնմանը, հիվանդանոցների եւ ամբուլատորիաների շինարարությանն ու հանդերձավորմանը, գյուղատնտեսության ծրագրերին, «Արտադրի'ր Վրաստանում», «Ներդրի'ր ապագան» եւ այլ ծրագրերին: Հարկ է նշել տեղական արտադրության զարգացման ուղղությամբ մեր կողմից իրացված քայլերը, ինչի շնորհիվ երկրի ողջ տարածքում ստեղծվեցին մեծ թվով նոր աշխատատեղեր: Մենք մտադիր ենք է'լ ավելին անել ձեզ համար: Քաջատեղյակ եմ, որ մեր երկրի համար դեռեւս նշանակալից մարտահրավեր է գործազրկությունն ու աղքատությունը, եւ հենց այդ պատճառով էլ առաջիկայում շատ ավելի մեծ թվով նախագծեր ենք իրականացնելու: 2,5 միլիարդ կներդրվի տեղական արտադրության ուղղությամբ, առաջիկա տարիներին ծրագրվում է իրականացնել 7 միլիարդ լարիի ներդրում գյուղատնտեսության ոլորտում: Նաեւ քաջատեղյակ եմ, թե ինչ աշխատասեր մարդիկ են ապրում Ախալքալաքիում, հավատարիմ, հայրենասեր մարդիկ, ովքեր իրենց ջանադիր աշխատանքով են ստեղծում բարիքը, բարելավում իրենց ընտանիքների ու դրանով իսկ հզորացնում մեր ընդհանուր հայրենիքը,- շնորհանդեսին հայտարարեց Վրաստանի վարչապետը:

Մունիցիպալիտետի զարգացման հեռանկարներին էր նվիրված Վրաստանի խորհրդարանի նախագահ Կախա Կուճավայի խոսքը.

- Երբ խոսում ենք Ախալքալաքիի մասին, այն նախ ընկալում ենք որպես գյուղատնտեսական տարածք: Բախտ եմ ունեցել շրջայց կատարել մի քանի գյուղերում եւ միշտ զարմացել տեղացիների աշխատասիրության վրա, թե ինչպես են կարողանում բարիք ստեղծել իրենց ընտանիքի, հարազատ երկրամասի եւ, իհարկե, ողջ Վրաստանի համար: Կան նաեւ այլ ուղղություններ, որոնք անպայման պետք է զարգանան: Առավել եւս, երբ խոսքը պետական դրամաշնորհներին ու ծրագրերին է վերաբերում: Գիտենք, որ շատերն օգտվում են պետության կողմից ընձեռած հնարավորություններից, չնայած, եթե վերցնենք ողջ Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանը եւ այն դիտարկենք ոչ միայն գյուղատնտեսության ուղղությամբ, այլ ուրիշ մոտեցմամբ, ապա ակնհայտ է, որ երկրամասն աչքի է ընկնում իր բացառիկությամբ:

Միջոցառմանն իր խոսքում «Վրացական երազանքից» Ախալքալաքիի քաղաքապետի թեկնածու Մելքոն Մակարյանը շնորհակալություն հայտնեց քաղաքական թիմին իր հանդեպ ցուցաբերած մեծ վստահության համար:

- Առանձնակի զգացում է, երբ գիտակցում ես, որ քո քաղաքական թիմը քեզ ընձեռում է այս քաղաքին ու գյուղերին, այս ժողովրդին, ում հետ կապված է քո ողջ կյանքը, ծառայելու հնարավորություն: Դրա համար խորին շնորհակալություն եմ հայտնում «Վրացական երազանքին»:

«Վրացական երազանք - ժողովրդավարական Վրաստան» կուսակցության կողմից ինձ վստահված քաղաքապետի թեկնածությունը՝ պարտավորվեցնող ու խոստումնալից է:

Հուսով եմ ու նաեւ հավատացած, որ մեր ամենօրյա շփման եւ համագործակցության արդյունքում կհասնենք նշանակալի ձեռքբերումների, որոնց արդյունքում կունենանք ավելի զարգացած քաղաք ու գյուղ, ավելի բարեկեցիկ եւ հետաքրքիր կդարձնենք մեր ժողովրդի կենսակերպը, հոգ կտանենք մեր երեխաների ապագայի համար,- հայտարարեց քաղաքապետի թեկնածու Մելքոն Մակարյանը:

ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆ. «ՄԵՆՔ ՈՒՆԵՆՔ ՆԻՆՈՑՄԻՆԴԱՅԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԿՈՆԿՐԵՏ ՏԵՍԼԱԿԱՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նա իր արդյունավետ գործունեությամբ աչքի է ընկնում ողջ երկրի տարածքում: Հավասարակշռված տիկինն ու քաղաքապետը հիանալի կառավարիչ է: Հավատում եմ, որ Նինոծմինդան կպաշտպանի տիկին Անիվարդին, քանի որ նա այլընտրանք չունի: Նա վստահորեն կհաղթի առաջիկա ընտրություններին եւ կշարունակի ծառայել ձեզ,- հայտարարեց Վրաստանի վարչապետը:

Ներկայացնելով կառավարող թիմի կողմից Նինոծմինդայի քաղաքապետի պաշտոնում առաջադրված թեկնածուին՝ Վրաստանի խորհրդարանի նախագահ Կախա Կուճավան հայտարարեց.

- Երբ խոսում ենք այս մունիցիպալիտետի մասին, առաջին հերթին հիշում ենք գեղատեսիլ Փարվանա լիճը: Հիշում եմ՝ ինչ դժվարություններով, գրեթե անանցանելի ճանապարհներով էինք կարողանում հասնել լճին: Այսօր ճանապարհների հիմնախնդիրը գրեթե վերացվել է, ինչը նշանակալի կնպաստի տարածաշրջանում զբոսաշրջության զարգացմանը: Եվ այդ ամենը նշանակալից է մունիցիպալիտետի քաղաքապետ Անիվարդ Մոսոյանի ծառայությունը, որի նախաձեռնությամբ էլ մեծամասամբ իրականացվեցին ենթակառույցային նախագծերը:

Իր խոսքում քաղաքապետի թեկնածու Անիվարդ Մոսոյանը խոսեց սկսած 2012 թվականից, այսինքն՝ «Վրացական երազանքի» իշխանության գալու պահից, եւ առանձնապես վերջին չորս տարիների ընթացքում մունիցիպալիտետում տեղի ունեցած փոփոխությունների մասին:

- Միայն մեկ հանդիպումն էլ բավական էր, որ տեսնեինք, թե ինչ առաջընթաց է ապրել մեր տարածաշրջանը «Վրացական երազանք» կուսակցության կառավարման անցնելուց հետո: Թեկուզ վերցնենք վերջին 4 տարիները, երբ ես աշխատել եմ ձեզ հետ եւ քանի հաջողված նախագծեր ենք իրագործել միասին, յուրաքանչյուր այս հաջողության հետեւում դուք եք կանգնած, իմ նինոծմինդացիներ, շնորհակալ եմ դրա համար:

- Ես եւ իմ խումբը ունենք կոնկրետ տեսակետ, թե ինչպես դարձնել Նինոծմինդան ավելի արդուզարդ, զարգացած եւ հաջողակ: Այս ուղղությամբ մեր կարեւորագույն նկատառումներից մեկը երիտասարդների աջակցությունն է ,նրանց զարգացման,կրթության եւ աշխատանքի մասին հոգալը: Հավատում եմ, որ Նինոծմինդան կդառնա քաղաք, որտեղ երիտասարդները կունենան հնարավորություն, որպեսզի յուրաքանչյուր ոլորտում հասնեն հաջողության, քաղաք, որտեղ տարեցների համար առօրյան կպարունակի սակավ դժվարություններ, որտեղ մեր քաղաքացիների համար կլինեն բավարար աշխատատեղեր, եւ նրանք ստիպված չեն լինի գնալ աշխատելու ոչ միայն ուրիշ երկիր, այլեւ Վրաստանի այլ քաղաքներ,- իր խոսքում ասաց Նինոծմինդայի քաղաքապետի թեկնածուն:

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ ԵՎ ՆԻՆՈՑՄԻՆԴԱՅՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԸ

Հոկտեմբերի 2-ին անցկացվելիք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նախընտրական քարոզարշավի շրջանակներում, Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների քաղաքապետի թեկնածուներ Մելքոն Մակարյանն ու Անիվարդ Մոսոյանը, երկու մունիցիպալիտետների սակրեբուլոների «Վրացական երազանքից» ներկայացված պատգամավորության թեկնածուները շարունակում են հանդիպումները տեղի բնակիչների հետ:

Մասնավորապես, Ախալքալաքիի քաղաքապետի թեկնածու Մելքոն Մակարյանը նախընտրական հանդիպումներ ունեցավ Ազավրեթի, Բուռնաշեթ, Ղադոլար եւ Լոմատուրցխ գյուղերի բնակիչների հետ: Հանդիպմանը, որին մասնակցեցին նաեւ մեծամասնական ընտրակարգով Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Սամվել Մանուկյանը, Ախալքալաքիի մունիցիպալիտետի ղեկավարները, քաղաքապետի թեկնածուն ներկայացրեց այն ծրագրերը, որոնք իրականացվելու են մունիցիպալիտետի բնակավայրերում առաջիկա չորս տարիների ընթացքում:

Նախընտրական քարոզարշավի շրջանակներում, բնակչության հետ հանդիպումները շարունակում է նաեւ Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետի թեկնածու Անի Մոսոյանը: Նա, մունիցիպալիտետի ղեկավարների ուղեկցությամբ հանդիպումներ ունեցավ Սաթխա, Փոքր Արագյալ, Մեծ Արագյալ, Օրոջալար, Մամզարա, Դիլիֆ, Մեծ Գոնդուրա, Փոքր Գոնդուրա, Ղուլալիս, Ջիգրաշեն, Փոքր Խորենիա, Խոջաբեկ գյուղերի բնակիչների հետ:

Հանդիպմանը քաղաքապետի թեկնածուն ներկայացրեց 2017 թվականի տեղական ընտրություններից հետո, մունիցիպալիտետի բնակավայրերում իրականացված նախագծերը եւ պատմեց առաջիկա ծրագրերի մասին:

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԱԲԱՍԹՈՒՄԱՆԻՈՒՄ ԵՎ ԱԾՂՈՒՐԻՈՒՄ

Հոկտեմբերի 2-ին անցկացվելիք տեղական ընտրությունների նախընտրական արշավի շրջանակներում, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին այցելեց Աբասթումանի, ստուգեց Աբասթումանիի Կենտրոնական փողոցի վրա 19-20-րդ դարերում կառուցված վերականգնված տները:

Տեղացիների հետ հանդիպմանը վարչապետը նշեց, որ Աբասթումանիում իրականացվող ծրագրերը կօգնեն զբոսաշրջիկների լրացուցիչ հոսք ներգրավել տարածաշրջան եւ աշխատանքի տեղավորել տեղի բնակիչներին:

- Տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների նախարարությունը 2020 թվականին ավարտեց տների վերականգնման աշխատանքները: Վերականգնումն իրականացվել է Համաշխարհային բանկի 5,7 մլն լարի ֆինանսական աջակցությամբ:

Այս փուլում հայտնաբերվում են եւս մի քանի տասնյակ պատմական տներ հետագայում վերականգնելու համար: Նրանց վերականգնումը կիրականացվի Աբասթումանիի քաղաքաշինական աշխատանքների երկրորդ փուլի շրջանակներում,- ասաց վարչապետը:

Քարոզարշավի շրջանակներում, երկրի վարչապետը Ածղուրիում ծանոթացավ Բիձինա Իվանիշվիլու «Քարթու» հիմնադրամի կողմից ֆինանսավորվող, Ախալցիխեի եւ Տաո-Կլարջեթիի միտրոպոլիտ Թեոդորեի նախաձեռնությամբ Ածղուրիի Սուրբ Աստվածածին եկեղեցու շինարարության ընթացքին:

- Այս տաճարի վերականգնումն սկսվեց սրբազան Թեոդորեի նախաձեռնությամբ: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել սրբազանին այս նախաձեռնության համար եւ երախտագիտություն՝ պարոն Բիձինա Իվանիշվիլուն ու «Քարթու» հիմնադրամին, որն այս աշխատանքներն իրականացնում է արդեն մի քանի տարի, որոնք կավարտվեն շուտով,- ասաց վարչապետը:

Էջը պատրաստեց
ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆԸ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Է ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԾԱՎԱԼԻ ՆՎԱԶՈՒՄ

Վիճակագրության ազգային ծառայության նախնական տվյալների համաձայն, 2021 թվականի երկրորդ եռամսյակում Վրաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը կազմել է 234,2 մլն դոլար, ինչը 2,6 տոկոսով պակաս է, քան 2020 թվականի երկրորդ եռամսյակի ճշգրտված տվյալներում արտացոլված ցուցանիշը:

Կրճատման հիմնական պատճառներն են բաժնետիրական կապիտալի կրճատումը, մի քանի ձեռնարկությունների փոխանցումը Վրաստանի ռեզիդենտի սեփականությանը եւ վարկային պարտքի մարումը:

Ըստ Վիճակագրության ազգային ծառայության, 2021 թվականի երկրորդ եռամսյակում, Վրաստանում կատարված ուղղակի օտարերկրյա ներդրումների համաձայն, Միացյալ Թագավորությունը զբաղեցնում է առաջին տեղը խոշորագույն ներդրող երկրների շարքում՝ 77,1 մլն դոլարով, որը կազմում է ընդհանուր ուղղակի օտարերկրյա ներդրումների 32,9 տոկոսը, երկրորդ տեղում Նիդերլանդներն են՝ 31,5 միլիոն դոլարով (13.5 տոկոս), իսկ երրորդ տեղում Չեխիան է՝ 30,8 միլիոն դոլարով (13,2 տոկոս):

Սակայն, գերատեսչության տվյալներով, 2021 թվականի երկրորդ եռամսյակում ամենամեծ օտարերկրյա ուղղակի ներդրումները կատարվել են ֆինանսական հատվածում եւ կազմել 82,0 մլն դոլար, որը կազմում է ընդհանուր ուղղակի օտարերկրյա ներդրումների 35,0 տոկոսը: Երկրորդ տեղում էներգետիկայի ոլորտն է՝ 65,2 մլն. դոլարով (27,8 տոկոս), իսկ երրորդում՝ արտադրական ոլորտը՝ 46.5 միլիոն դոլարով (19,9 տոկոս):

ԱՎԵԼԱՑԵԼ Է ԿԵՆՍԱԿԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Վիճակագրության ազգային ծառայության տվյալներով, 2021 թվականի օգոստոսին, հուլիսի համեմատ, Վրաստանում կենսապահովման մակարդակն աճել է:

2021 թվականի հուլիսին աշխատունակ տղամարդկանց կենսապահովման մակարդակը կազմել է 218,3 լարի, մինչդեռ օգոստոսին այս ցուցանիշն աճել է երկու լարիով եւ 80 թեթրիով՝ ընդհանուր գումարը կազմելով 221,1 լարի:

Միեւնույն ժամանակ, ըստ Վիճակագրության ազգային ծառայության, մարտի համեմատ, միջին սպառողի կենսապահովման մակարդակը օգոստոսին աճել է 2,4 լարիով եւ կազմել 195,8 լարի:

Գերատեսչության տվյալներով, այս տարվանից, ըստ վիճակագրական աշխատանքների նոր ծրագրի, այս ցուցանիշի դիտարկում այլեւս չի իրականացվի: Ինչպես նշվում է Վիճակագրության ազգային ծառայությունում, այս ցուցանիշը չի օգտագործվում պլանավորման եւ որոշումներ կայացնելու գործընթացում:

Վիճակագրության ազգային ծառայությունը սահմանում է կենսապահովման մակարդակը՝ հիմնվելով նվազագույն պարենային զամբյուղի վրա: Նվազագույն պարենային զամբյուղը պարունակում է սննդի այն քանակությունը, որը ֆիզիոլոգիապես անհրաժեշտ է աշխատունակ տարիքի տղամարդու բնականոն կյանքի եւ աշխատունակության համար: Սննդամթերքի զամբյուղը բաղկացած է 40 ապրանքներից՝ հացից, հացահատիկից, մսից, կաթնամթերքից, բանջարեղենից եւ հրուշակեղենից:

ՔՐԵԱԿԱՆ

ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԵՎ ՔՈՒԹԱՅԻՍԻՈՒՄ ԱՌԳՐԱՎՎԵԼ Է ՁԵՆՔԻ ՈՒ ՁԻՆԱՄԹԵՐՔԻ ՄԻ ԱՄԲՈՂՋ ՁԻՆԱՆՈՑ

Վրաստանի ներքին գործերի նախարարության տարածած տեղեկատվության համաձայն, սեպտեմբերի 13-ին Թբիլիսիում եւ Քութայիսիում երեք մարդ է ձերբակալվել հրածգային զենքի ու զինամթերքի անօրինական ձեռքբերման ու պահպանման մեղադրանքով:

Գերատեսչության տեղեկատվությամբ, օպերատիվ եւ հետաքննչական միջոցառումներն անցկացվել են տարբեր ժամանակներում՝ ինչպես Վրաստանի մայրաքաղաքում, այնպես էլ՝ Իմերեթիի տարածաշրջանում:

Ձերբակալվածների թվում է ավելի վաղ դատապարտված 30-ամյա քաղաքացի: Նրա անձնական ավտոմեքենայի խուզարկության ընթացքում, ոստիկանությունն առգրավել է Մակարով եւ TT ատրճանակներ, չորս պահունակ եւ 22 փամփուշտ:

Թբիլիսիում ձերբակալվել է 26-ամյա մի երիտասարդ, ում մեքենայի մեջ գտել են ատրճանակ, որը պատրաստվել է տնայնագործական եղանակով, պահունակ եւ չորս մարտական փամփուշտ:

Բացի այդ, ոստիկանությունն Իմերեթիի տարածաշրջանում 49-ամյա տղամարդու է ձերբակալել զինամթերքի անօրինական ձեռքբերման ու պահպանման մեղադրանքով:

Նրա տան խուզարկության ժամանակ իրավապահները գտել են Ֆ-1 տեսակի նռնակ:

Հետաքննությունն իրականացվում է «Հրաձգային զենքի ու զինամթերքի անօրինական ձեռքբերում, պահպանում եւ կրում» հոդվածով: Հանցագործությունը նախատեսում է ազատազրկում 3-7 տարի ժամկետով:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ԿԱՌՈՒՑՎՈՒՄ Է ԱՇԽԱՐՀԻ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ԹՈՒՆԵԼՆԵՐԻՑ ՄԵԿԸ, ՈՐԸ ԳՐԵԹԵ ՄԵԿ ԺԱՄՈՎ ԿԿՐՃԱՏԻ ԹԲԻԼԻՍԻՑ ՍՏԵՓԱՆԾՄԻՆԴԱ-ԼԱՐՍ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԱԺԱՄԱՆԱԿԸ

Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարության ավտոմոբիլային ճանապարհների դեպարտամենտն ակտիվորեն շարունակում է երկրի համար բացառիկ ճանապարհաշինական՝ Թբիլիսիից մինչեւ Ստեփանծմինդա ռազմա-վիրական կոչվող ճանապարհի Քվեշեթի-Կոբի ավտոճանապարհի 9 կմ երկարության թունելի շինարարության նախագիծը:

Քվեշեթի-Կոբի 23 կմ ճանապարհի թունելի շինարարության շրջանակներում, սկսվել են թունելի հորատման աշխատանքները, ինչը հյուսիս-հարավ միջանցքի մայրուղու արդիականացման նախագծի բաղկացուցիչ մասն է: Նախագծի շրջանակներում, կարգավորվելու է երկու գոտիանոց ասֆալտբետոնե ճանապարհ, հինգ կամուրջ, հինգ թունել, իրականացվելու է կամրջի վերանորոգում: Հորատումն իրականացվելու է TBM (Tunnel hiring machine) հորատիչով, որը աչքի է ընկնում նրանով, որ աշխատանքի ընթացքում նրա տատանումը նվազագույնն է, ինչն ապահովում է անվտանգ աշխատանքային գործընթաց եւ նվազագույն վնաս շրջակա միջավայրին:

9կմ երկարությամբ եւ 15մ շառավղով թունելը աշխարհում բացառիկ ստորգետնյա անցումներից մեկը կլինի եւ առաջիկայում իր տեղը կզբաղեցնի աշխարհի խոշորագույն թունելների շարքում:

Հատկանշական է, որ նախագծի շրջանակներում նաեւ կկառուցվի ինժեներական արտակարգ բարդության 550մ երկարությամբ կամարաձեւ կամուրջ: Ներկա դրությամբ, Վրաստանում նման կամուրջ գոյություն չունի: Կամարաձեւ կամուրջը ճարտարապետության տեսանկյունից, օրգանապես կհամապատասխանի տեղի բնությանը եւ առաջիկայում կվերածվի Վրաստանի տեսարժան վայրերից մեկի:

Հիշեցնենք, որ ներկա դրությամբ, գործող ճանապարհի երկարությունը 34կմ է: Նոր ճանապարհի գործարկմամբ, այն կկրճատվի 11կմ-ով, ինչը թույլ կտա տնտեսել մեկ ժամ ճանապարհաժամանակ, որպեսզի Թբիլիսիից հասնեն Ստեփանծմինդա՝ վրաց-ռուսական սահման: Հատկանշական է նաեւ այն փաստը, որ նոր ճանապահի գործարկմամբ, լրիվությամբ բացառվում է ձնահոսքերի, ճանապահի սառցակալումների, սողանքների հետեւանքով ճանապարհային երթեւեկության կանգնեցման, ավտոմեքենաների բազմակիլոմետրանոց խցանումների հավանականությունը:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ



ՀԻՆԳ ՄՐՑՈՒՅԹ՝ ՏԱՐԲԵՐ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Վրաստանի մշակույթի, սպորտի եւ երիտասարդության նախարարությունը հայտարարում է հինգ նոր մրցույթ՝ տարբեր նախագծերի ֆինանսավորման համար:

Ըստ գերատեսչության տարածած տեղեկատվության, հայտարարվում է «Աջակցություն բեմական հագուստի (կոշիկի եւ աքսեսուարների) վարպետներին» (բյուջե՝ 20 000 լարի), «Աջակցություն դասական եւ ժողովրդական գործիքների վարպետներին» (բյուջե՝ 20 000 լարի), «Ազատ նախագծերի խթանում մշակույթի ոլորտում» (բյուջե՝ 500 000 լարի), Տաղանդավոր երիտասարդ նկարիչների կրթության խթանում (երկրորդ փուլ) (բյուջե՝ 50 000), «Նոր վրացական գիրք»՝ Հրատարակչական ոլորտի խթանում (երկրորդ փուլ) (բյուջե՝ 50 000):

ԳՐԱՆՑՎԵԼ Է ՎԵՐՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿԻ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ԳՆԱՁԸ...

Վրաստանի վիճակագրության ազգային ծառայության տվյալների համաձայն, 2021 թվականի օգոստոսին տարեկան գնաճը կազմել է 12,8 տոկոս, ինչը վերջին 10 տարիների ընթացքում ամենաբարձր ցուցանիշն է:

Վերջին անգամ երկրում գնաճի ավելի բարձր մակարդակ է գրանցվել 2011 թվականի մայիսին: Ամսական գնաճի դեպքում գները, նախորդ ամսվա համեմատ, այսինքն՝ 2021 թվականի հուլիսի համեմատ, աճել են 0,7 տոկոսով:

Տարեկան գնաճի դեպքում, գները բարձրացել են բոլոր խմբերում, բացառությամբ կապի, որտեղ նկատվել է 0,4 տոկոս անկում:

ԵՎ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ

Վրաստանի վիճակագրության ազգային ծառայության տվյալներով, երկրում կենդանի ծնունդների թիվը 2021 թվականի հունվար-հունիսին կազմել է 21 839: Նույն ժամանակահատվածում երկրում մահացել է 25 821 մարդ:

Ինչպես նաեւ, 2021 թվականի առաջին կիսամյակում բնական աճը (կենդանի ծնունդների եւ մահացածների թվի միջեւ տարբերությունը) կազմել է -3,982 մարդ:

2021 թվականի առաջին 6 ամիսներին գրանցվել է 9 163 ամուսնություն եւ 4 675 ամուսնալուծություն:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ՈՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԸ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ԵՐԿՐՈՒՄ ՎԵՐՋԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Սեպտեմբերի 17-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին երկրի նախագահիի նստավայրում՝ Օրբելիանիների պալատում հանդիպում է ունեցել ժողովրդական պաշտպան Նինո Լոմջարիայի հետ:

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի նախագահիի մամլո ծառայությունը, հանդիպմանը Վրաստանի նախագահն ու Ժողովրդական պաշտպանը քննարկել են երկրում վերջին զարգացումների եւ գաղտնի ձայնագրությունների տարածման մասին հարցերը:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆ ԱՋԱԿՑԵԼ Է ՆԻԿԱ ՄԵԼԻԱՅԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆԸ

Սեպտեմբերի 17-ին Վրաստանի խորհրդարանի ընթացակարգային հարցերի կոմիտեն կողմ է արտահայտվել Նիկա Մելիայի պատգամավորական մանդատի դադարեցմանը՝ իր իսկ դիմումի հիման վրա:

Ընթացակարգային հարցերի կոմիտեի նիստում «Միասնական ազգային շարժում» կուսակցության անդամ Լեւան Բեժաշվիլին բարձրացրեց այդ կապակցությամբ խորհրդարանի արտահերթ նիստ հրավիրելու հարցը:

Ընթացակարգային հարցերի կոմիտեի նախագահ Իրակլի Քադագիշվիլու պարզաբանմամբ, կոմիտեն հստակ սահմանել է կանոնակարգը եւ նման դիմումների ժամկետները, ուստի այն հետեւում է հարցի քննարկմանը օրացուցային ժամանակացույցով:

- Ինչպես գիտեք, այս հարցը գնում է խորհրդարան, եւ խորհրդարանն է ընդունում վերջնական որոշումը: Մենք կրկին հետեւում ենք այս պահանջներին սկզբից մինչեւ վերջ: Եթե այստեղ կա որեւէ քաղաքական կամք, եւ դա դիմողի անձնական ցանկությունն է, ինչով է դա պայմանավորված, նա, հավանաբար, պետք է բացատրի: Արտահերթ նիստ հրավիրելը մեր կոմիտեի իրավասությունը չէ,- ասել է Քադագիշվիլին:

Նշենք, որ Նիկա Մելիան խորհրդարանին դիմեց հուլիսի 29-ին, իրեն պատգամավորական մանդատից զրկելու պահանջով:

ՎԻճԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՅԱԿՈՒՄ՝ ՀՆԱ-Ի ԳՐԵԹԵ 30 ՏՈԿՈՍԱՆՈՑ ԱՃ...

Վրաստանի վիճակագրության ազգային ծառայության նախնական տվյալներով, 2021 թվականի երկրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատ, երկրի համախառն ներքին արտադանքը (ՀՆԱ) աճել է 29,9 տոկոսով:

Ընթացիկ գներով, հաշվետու ժամանակահատվածում ՀՆԱ-ի ծավալը կազմել է 15,9 միլիարդ լարի, ՀՆԱ-ի պակասորդը ավելացել է 10,3 տոկոսով:

Վիճակագրության ծառայության տվյալներով, երկրորդ եռամսյակում առանձնակի առաջընթաց է գրանցվել արվեստի, ժամանցի եւ հանգստի (133,6 տոկոս), սննդի բաշխման (75,5 տոկոս), տեղեկատվության ու հաղորդակցության (56,2 տոկոս), մեծածախ եւ մանրածախ առեւտրի, ավտոմեքենաների եւ մոտոցիկլետների վերանորոգման (53,9 տոկոս), ջրամատակարարման, կոյուղու, կենցաղային մնացորդների կառավարման (49,8 տոկոս), տրանսպորտի եւ պահեստավորման (47,0 տոկոս), ֆինանսների եւ ապահովագրության (45,5 տոկոս), առողջապահության եւ սոցիալական ապահովության (43,4 տոկոս), վերամշակման արդյունաբերության (42,3 տոկոս) ոլորտներում:

Անկում է գրանցվել գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնատնտեսության եւ կրթության ոլորտներում:

...ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ 15,5 ՏՈԿՈՍ ԱՎԵԼԱՑՈՒՄ

Վիճակագրության ազգային ծառայության տվյալներով, 2021 թվականի երկրորդ եռամսյակում Վրաստանում միջին ամսական անվանական աշխատավարձը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 15,5 տոկոսով կամ 177,9 լարիով եւ կազմել 1 328,0 լարի:

Համեմատաբար բարձր աշխատավարձ է դիտվել հետեւյալ բնագավառներում. Ֆինանսական եւ ապահովագրական գործունեություն՝ 2 354,7 լարի (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 15,4 տոկոսով), տեղեկատվություն եւ հաղորդակցություն՝ 2 173,0 (աճել է 12.4 տոկոսով), շինարարություն՝ 2 006,1 լարի (աճել է 23,7 տոկոսով), մասնագիտական, գիտական եւ տեխնիկական գործունեություն՝ 1 919,5 լարի (ավելացել է 7,4 տոկոսով):

Միաժամանակ, վիճակագրության ազգային ծառայության տվյալներով, այս տարվա երկրորդ եռամսյակում կանանց միջին աշխատավարձը սահմանվել է 1 077,8 լարի, իսկ տղամարդկանցը՝ 1 560,0 լարի: Աշխատավարձի տարեկան բարձրացումը կանանց մոտ կազմել է 153.6 լարի, իսկ տղամարդկանցը՝ 207,6 լարի: Ըստ գործունեության տեսակների, տղամարդկանց աշխատավարձը գրեթե բոլոր ոլորտներում գերազանցում էր կանանց աշխատավարձին:



ԱՄՆ

20 ՏԱՐԻ՝ ՍԵՊՏԵՄԲԵՐՅԱՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Արդեն 20 տարի է անցել Միացյալ Նահանգներում միջազգային ահաբեկչական «Ալ Քաիդա» կազմակերպության կողմից իրականացված ահաբեկչական հարձակումներից:

Երկրում ահաբեկչությունից զոհվածների հիշատակին նվիրված միջոցառումներին մասնակցեցին ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը՝ առաջին տիկին Ջիլ Բայդենի հետ: Նրանք հարձակման բոլոր երեք վայրերը՝ ըստ ահաբեկչությունների ժամանակի, հարգանքի տուրք մատուցեցին զոհերի հիշատակին:

Հիշեցնենք, որ 2001 թվականի սեպտեմբերի 11-ին «Ալ Քաիդայի» մահապարտներն առեւանգեցին չորս ուղեւորատար ինքնաթիռ, որոնցից երկուսը բախվեցին Նյու Յորքի Առեւտրի համաշխարհային կենտրոնի երկնաքերերին: Մեկ այլ ինքնաթիռ ընկել էր Պենտագոնի վրա Վաշինգտոնում, իսկ չորրորդը՝ Փենսիլվանիայի դաշտում: 2001 թվականի սեպտեմբերի 11-ին տեղի ունեցած ահաբեկչությունների հետեւանքով ԱՄՆ-ում զոհվեց 2977 մարդ:

ՌՈՒՍԱՍՏԱՆ
Վ. ՊՈՒՏԻՆԸ ԻՆՔՆԱՄԵԿՈՒՍԱՑԵԼ Է

Ռուսաստանի նախագահի շրջապատում կորոնավիրուսով վարակման դեպքերի հաստատումից հետո, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինն ինքնամեկուսացել է:

Այդ մասին նա տեղեկացրել է կառավարության անդամների եւ «Եդինայա Ռոսիա» կուսակցության ղեկավարների հետ տեսակապով անցկացված խորհրդակցության ընթացքում:

- Դուք արդեն գիտեք՝ ես ստիպված եղա հետաձգել Տաջիկստան այցը, կապված նրա հետ, որ իմ շրջապատում մի քանի մարդ հիվանդացել է, եւ այդ աշխատակիցներից մեկն աշխատում է ինձ հետ,- ասել է Պուտինը:

ԷԿՈՆՈՄԻԿԱ

ՆԱԹԻԱ ԹՈՒՐՆԱՎԱ. «ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ ՊԵՏՔ Է ԱՐՏԱՑՈԼՎԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԸՆՏԱՆԻՔԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՎՐԱ»

Սեպտեմբերի 15-ին Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Նաթիա Թուրնավան, հանրագումարելով ընթացիկ տարվա առաջին կեսի տնտեսական արդյունքները, նշեց, որ առաջընթացն ակնհայտ է, եւ դա վավերացվել է նաեւ միջազգային գնահատումներում:

Մասնավորապես, «Ֆրեյզերի ինստիտուտի» 2021 թվականի «Համաշխարհային տնտեսական ազատություն» վարկանիշում Վրաստանն առաջադիմել է երեք հորիզոնականով եւ 8,26 միավորով ութերորդից տեղափոխվել հինգերորդ հորիզոնական: Վարկանիշը գնահատում է երկրների հինգ հիմնական ցուցանիշները: Այս տարի, նախորդ տարվա համեմատ, Վրաստանը բարելավել է իր դիրքերը հինգ ցուցանիշներից երեքում՝ «Կառավարության չափը», «Իրավական համակարգի եւ սեփականության իրավունքների պաշտպանություն» ու «Միջազգային առեւտրի ազատություն»:

- Սա իսկապես այն ձեռքբերումն է, որը բերել է մեր թիմը՝ բիզնեսի, ձեռնարկատիրության ազատություն, հարգանք՝ մասնավոր սեփականության նկատմամբ: Ուրախալի է, որ միջազգային անաչառ վարկանիշային ընկերությունները դա շատ համարժեք են գնահատում,- ասաց էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարը:

Նաթիա Թուրնավայի խոսքով, տնտեսության ոլորտում տեղի ունեցող փոփոխությունները դրական են գնահատվում նաեւ հենց գործարարների կողմից:

- Կարեւոր է, որ ձեռնարկությունները զգան ու դրական գնահատեն գործարար միջավայրը եւ դրական ակնկալիքներ ունենան դրանից,- ասաց Նաթիա Թուրնավան եւ հավելեց, որ ըստ ուսումնասիրության, վերջին ամիսների տնտեսության աճի բարձր տեմպը դրական է արտացոլվել բիզնեսի ընթացիկ վիճակի գնահատման մեջ: 2021 թվականի երրորդ եռամսյակում, նախորդ եռամսյակի համեմատ, բիզնեսի ներկա վիճակը բարելավվել է 13 միավորով եւ կազմել դրական 10,8 միավոր:

Անդրադառնալով էկոնոմիկայի առաջընթացը բնութագրող վիճակագրական տվյալներին՝ էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարը նշեց, որ տնտեսության վերականգնման շնորհիվ մի շարք ոլորտներում բարելավվել է աշխատողների վարձատրությունը:

- Սա շատ կարեւոր է եւ սկզբունքորեն անխուսափելի, երբ տնտեսությունն առողջանում է: Մենք ամեն ինչ անում ենք, որ այն ներառական լինի եւ ավելի մեծ ազդեցություն ունենա յուրաքանչյուր ընտանիքի բարեկեցության վրա: Իհարկե, սա պետք է արտացոլվի նաեւ աշխատավարձերի բարձրացման մեջ: Այս միտումը սկսվել է, եւ մենք ողջունում ենք այն,- հայտարարեց Նաթիա Թուրնավան:

Ավելացնենք, որ ըստ Վիճակագրության ազգային ծառայության, 2021 թվականի երկրորդ եռամսյակում աշխատավարձի աճ է նկատվել տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում (բացառությամբ՝ այլ տիպի ծառայությունների), աշխատավարձի ամենաբարձր աճը գրանցվել է հետեւյալ ոլորտներում՝ շինարարություն (աճ՝ 23,7 տոկոս), ֆինանսական եւ ապահովագրական գործունեություն (աճը՝ 15,4 տոկոս), տրանսպորտ եւ պահեստավորում (աճ՝ 18,6 տոկոս), վերամշակող արդյունաբերություն (աճ՝ 24,3 տոկոս) տեղեկատվություն եւ հաղորդակցություն (աճ՝ 12,4 տոկոս), առեւտուր (աճ՝ 20,1 տոկոս):

Միեւնույն ժամանակ հարկ է նշել, որ բիզնես-ոլորտում աշխատողների աշխատավարձերը 2021 թվականի երկրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 18,2 տոկոսով:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ